ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-39-ԱՈ-10
2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 119-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 119-րդ հոդվածի կիրառման ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ

2021թ. հունիսի 14
ք. Երևան

Հավելված
Բարձրագույն դատական խորհրդի
2021 թվականի հունիսի 14-ի
թիվ ԲԴԽ-39-ԱՈ-10 որոշման

ՈՒՂԵՑՈՒՅՑ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 119-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Սույն ուղեցույցով (այսուհետ՝ Ուղեցույց) սահմանվում են Հայաստանի Հանրապետության դատավորների մեկ այլ առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնում նշանակվելու՝ օրենքով չնախատեսված առանձնահատկությունները: Ուղեցույցի նպատակն է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 119-րդ հոդվածով նախատեսված գործընթացի արդյունավետ, թափանցիկ և կանխատեսելի իրականացման ապահովումը, ինչպես նաև տեղափոխման դիմում ներկայացնող դատավորների համար տեղափոխման հանգամանքների որոշակիության երաշխավորումը:

2. Տեղափոխման դիմում ներկայացնող դատավորը դիմումի մեջ պետք է շարադրի տեղափոխման հիմնավոր պատճառներ՝ բացահայտելով պաշտոնավարմանը խոչընդոտող ընտանեկան, անձնական բնույթի հանգամանքների, ինչպես նաև այլ բացառիկ հիմքերի էությունը և դրանց ազդեցությունը նշանակման վայրի դատարանում պաշտոնավարումը շարունակելու վրա՝ ներկայացնելով համապատասխան ապացույցներ:

3. Բարձրագույն դատական խորհուրդը Օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն որպես բացառիկության հիմքեր է դիտում առնվազն հետևյալ հանգամանքները.

4. **Բացառիկ հիմքեր,** որոնք կապված չեն պաշտոնավարմանը խոչընդոտող ընտանեկան կամ անձնական բնույթի հանգամանքների հետ՝

4.1. Երեք տարուց ավելի նույն առաջին ատյանի դատարանում պաշտոնավարելը: Սույն կետով նախատեսված դեպքում տեղափոխման համար անհրաժեշտ է, որ դիմող դատավորը ցանկություն հայտնի տեղափոխվել իր մշտական բնակության վայրին մոտ դատարան:

4.2. Դատարանի բնականոն գործունեության ապահովման նպատակով դատավորի տեղափոխումը մեկ դատարանից մեկ այլ դատարան այն դեպքում, երբ մեկ առաջին ատյանի դատարանում դատական գործերի բազմաքանակության պատճառով առաջացել է լրացուցիչ դատավոր ներգրավելու անհրաժեշտություն և խնդիրը հնարավոր չէ լուծել դատավորի գործուղման ճանապարհով: Սույն կետով նախատեսված

տեղափոխման անհրաժեշտությունը կարող է որոշվել և նախաձեռնվել միայն Բարձրագույն դատական խորհրդի կողմից: Նման անհրաժեշտության դեպքում համապատասխան տեղափոխման առաջարկը դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով ներկայացվում է տեղափոխման պայմաններին բավարարող բոլոր դատավորներին: Տեղափոխումը կատարվում է դատավորի համապատասխան դիմումի դեպքում: Մեկից ավելի դիմումների առկայության դեպքում ընտրությունը կատարվում է Ուղեցույցի 7-րդ կետի չափորոշիչներին համապատասխան:

5. **Բացառիկ հիմքեր,** որոնք կապված են պաշտոնավարմանը խոչընդոտող ընտանեկան կամ անձնական բնույթի հանգամանքների հետ՝

5.1. Դատավորի խնամքի ներքո գտնվող անաշխատունակ անձին խնամելու անհրաժեշտություն՝ պայմանով, որ այդ անձը չի կարող բնակվել դատավորի աշխատանքի վայրի բնակության վայրում և չկան այլ խնամակալներ,

5.2. Մեկից ավելի երեխաների կրթության կազմակերպման անհրաժեշտություն, նոր ընտանիքի ստեղծում և ամուսնու աշխատանքի՝ դատավորի աշխատանքի վայրում կազմակերպման անհնարինություն, այն դեպքում, եթե ամուսնու եկամուտն ավելի բարձր է դատավորի եկամտից և շահերի կենտրոնը հեռու է դատավորի աշխատանքի վայրից 50 և ավելի կիլոմետր: Այս հիմքի առկայությունը պետք է առաջացած լինի դատավորի նշանակումից հետո:

5.3. Առողջական վիճակով պայմանավորած հանգամանքներ, որոնք պետք է ի հայտ եկած լինեն դատավորի նշանակումից հետո և պետք է հիմնավորվեն համապատասխան բժշկական փաստաթղթերով: Նման դեպքերն են՝

ա) բարձր լեռնային գոտիներում աշխատելու հակացուցում,

բ) կոնկրետ բժշկական հաստատությունում հսկողության տակ գտնվելու անհրաժեշտություն, այն դեպքում, եթե բժշկական կենտրոնը հեռու է դատավորի աշխատանքի վայրից 50 և ավելի կիլոմետր:

6. Ուղեցույցի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում մեկ այլ առաջին ատյանի դատարան նշանակման համար անհրաժեշտ է, որպեսզի դիմող դատավորի վարույթում՝

ա) լինեն դատավորների ծանրաբեռնվածության մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ սահմանված միջինից ավելի քիչ թվով գործեր,

բ) գործերի քննության միջին ուղենիշային ժամկետների մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ սահմանված ժամկետներից շեղումը չկազմի բոլոր գործերի 10 տոկոսից ավելին (մինչև Ուղեցույցի 6-րդ կետով նախատեսված Բարձրագույն դատական խորհրդի համապատասխան որոշումներն ուժի մեջ մտնելը, տեղափոխման դիմումի բավարարման համար կարող է հիմք ընդունվել մեկ տարվա ընթացքում դատավորի կողմից ստացված և ավարտված գործերի դրական տարբերությունը),

գ) այլ դատարան դատավորի տեղափոխվելը չի խոչընդոտի նախկին դատարանում դատական գործերի քննության բնականոն ընթացքը:

7. Ուղեցույցի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով մեկից ավելի դիմումներ ներկայացվելու և տեղափոխման համար բացառիկ հանգամանքների հավասարության դեպքում նախապատվությունը տրվում է՝

ա) ավելի երկար դատավորի աշխատանքային ստաժ ունեցող դատավորին,

բ) մեկ տարվա ընթացքում դատավորի կողմից ստացված և ավարտված գործերի դրական տարբերություն և/կամ միջին ուղենիշային ժամկետներից ամենաքիչ շեղում ունեցող դատավորին,

գ) դիմելու պահին կարգապահական տույժ չունեցող դատավորին, իսկ «ա», «բ» և սույն ենթակետերի պայմանների հավասարության դեպքում՝ տարիքով ավագ դատավորին: